




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՋԳԱՅԻՆ • ԲԷՆԸՄԲԸԿԱՆ • ԳԲԸԳԻՏԸԿԱՆ
ՆԻ • ԳԸԴԸԲԸԿԱՆ

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԱՆ ՄԻԸՄՆԸՅ



ՅԵՐՈՒՍԸԴԼԻՍ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1870

ԱՆՈՒԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

ԱՆԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Տէր Եւթիմի աւագ քահանայ կառանմանց :

ԱՆԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՇԽԱՏԱՆ ԲԱՇԼԵՍԻ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ՍԻՆՈՒՆ
Չարիքան կարգաւոր աղա :
Հալաւան ճիւղին գրիգորեան :
Եւթիմիան թագաւոր աղա :
Սեփեւեան մահտեւի Պաղտա էֆենտի :

ԱՆՏՈՒՔ

Քեանեան Սարգիս աղա Արապիկեցի :

ԱՆՏԱՐԱՋԱՐ

Եղիանեան Սեպուհիան աղա :
Թարգմանեան մահտեւի Խաչատուր աղա :
Կորիկեան մահտեւի Սահակ աղա :

ԱՓԻՕՆ ԴԱՐԱՆԻՍԱՐ

Վարդանեան Գրիգոր աղա :

ԲԵԹՂԵՅԵՄ

Արժ. Թովմատ վարդապետ Տեսուչ :
Սարգիս աղա Տիրացու Աստուածատուր :
Վանք Հայոց :

ԲԵՐԻԱ

Ամենան Միքայել աղա :
Բրուտեան մահտեւի Մանու աղա Արապիկեցի :
ԳԱԼԱՇԱՆԸ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆ ՍԻՆՈՒՆ :
Գալանձեան Գեորգ աղա :
Եկաւեանց եղբայր Սեդու աղա Արապիկեցի :
Ներսէսեան Միքայել Արապիկեցի :
Շահաբեան մահտեւի Աստուածատուր աղա :
Սարգիսեան մահտեւի Վարդապետ աղա Արապիկեցի :
Տէր Խաչատուրեան մահտեւի Սարգիս աղա :
Տէր Կարապետեան Սարգիս աղա Եւթիմիցի :
Տէր Մարգարեան մահտեւի Նիկողոս աղա :
Տէր Սահակեան մահտեւի Եւթիմիցի էֆենտի :
Քիւրճիանեան Եւթիմիցի էֆենտի :

ԳԱՆՁԱԿ

Արժ. Եւթիմի վարդապետ Տէր Աւետիքեան :

ԴԱՄԱՍԿՈՍ

Արժ. Եւթիմի վարդապետ, Գրիգորեան Եւթիմիցի :
Գրիգորեան Եւթիմի վարդապետ :
Գրիգորեան Գեորգ աղա Ամեն :
Թեոփիլոսեան Թորոս աղա :
Աստուածատուր (Նիկողոս) :
Սերուբեան Մարտիրոս աղա Տիրացու Արապիկեցի :
ՎԱՆՔ ՀԱՅՈՑ. ԳՈՐԾԱԿԱՆ ՍԻՆՈՒՆ :
Փիլիպպոսեան Գարգիւ աղա Մաշկեցի :

ԵԳԻՊՏՈՍ

Գեր. Մեթոփիլ Արքեպիսկոպոս առաջնորդ (2 օր) :
Արժ. Աստուածատուր վարդապետ :
" Միքայել վարդապետ :
" Կարապետ վարդապետ :
Գալանձեան մահտեւի Նիկողոս օրիորդ Պաղտա :
ԼԱՇԱՐԻՍԱՆ ՍԻՆՈՒՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ
ՍԻՆՈՒՆ :
Կարապետեան Պաղտա էֆենտի :

Մարտիրոս աղա Ամեն :
Եւթիմի աղա Մարտիրոս :
Նաէր Խորենեան վարդապետ :
Ռաֆայելեան Գեորգ Պէլ :
Տիրացու Արքեպիսկոպոս Եւթիմիցի աղա Եւթիմիցի :

ԵՐԶԵՎԱՆ

Քիւրճիան մահտեւի Գրիգոր աղա :

ԵՐՈՒՍԱԿԵՄ

Ամեն. Տ. Տ. ԵՍԱՅԻ Սրբաբան Պաղտապետ (8 օր) :
Գեր. Սահակ Արքեպիսկոպոս :
" Կարապետ Արքեպիսկոպոս :
" Եւթիմի Արքեպիսկոպոս (2 օր) :
" Սիմեոն Արքեպիսկոպոս :
Արժանապատու Վրժանեան վարդապետ :
" Պէտրոս վարդապետ :
" Եղիշե վարդապետ :
" Խաչատուր վարդապետ :
" Կիրակոս վարդապետ :
" Փիլիպպոս վարդապետ :
" Բաւաթար վարդապետ :
" Եւթիմի վարդապետ :
" Վարդան վարդապետ :
" Թարգման վարդապետ :
" Եւթիմի վարդապետ :
" Անդրեաս վարդապետ :
" Եղիկե վարդապետ :
" Եղիկե վարդապետ :
" Մովսէս վարդապետ :
" Մարգար վարդապետ :

Սարգիս աղա Սահակ Պաղտապետ :
" Միքայել Տիրացու Արքեպիսկոպոս :
Տիրացու Գալանձի Տեղապետ :
Մարտիրոս Գալանձի Արքեպիսկոպոս Եւթիմիցի :
Բրուտեան Հիւսիսեան Պ. Պէտրոսեան :
Մարտիրոս Բաւաթար Եւթիմիցի (2 օր) :
Խաչատուրեան Եւթիմիցի աղա :
Մարտիրոսեան Կարապետ աղա :
Բրուտեան Հիւսիսեան Եւթիմիցի Պ. Սարգիսեան
Մարտիրոս :

ԵՐԵՄԻԱ

Գալանձեան մահտեւի Գրիգոր աղա Ամեն :
ԼՈՍԱՆՈՐԾԱԿԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ՍԻՆՈՒՆ :
ԼՈՍԱՆՈՐԾԱԿԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ՍԻՆՈՒՆ :
Պաղտապետ մահտեւի Պաղտապետ աղա :

ԵՐԵՄԻԱ


Տէր ԵՍՏՈՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ԵՎԱՌԱՆ ՍԻՆՈՒՆ :
Տէր Եւթիմի քահանայ Մեթոփիլ :
Քիւրճիան մահտեւի Եղիպար աղա :

ԵՐԵՄԻԱ

Առաջնորդ Եւթիմիցի, Արժ. Եւթիմի վարդապետ :
Չարիքեան մահտեւի Գրիգոր աղա :

ԶՄԻՆՈՒՆԱ

Աղաձանեան Ստեփան աղա :
Եւթիմի մահտեւի Եւթիմիցի աղա :
Մ. Երիզնեան Խաչատուր աղա :
Մարտիրոս Եւթիմիցի աղա :
Մարտիրոս վարդապետ :
Չարիքեան Բաւաթար աղա :
Չարիքեան Գրիգոր աղա :
Չարիքեան Եւթիմիցի աղա :
Պաղտապետ Դուրապետ աղա :



Մ Ի Օ Մ

ՀԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 3.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՐՏ 31.
1870.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Բ. Ա. Ն. Ա. Ս. Ի. Բ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Բ. Ա. Գ. Ի. Տ. Ա. Ն.

Կ Ր Ց Ն Ա. Կ Ա Ն Ք

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ ԻՍԲԵՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՐՈՒԹԵԱՆՑ
ԿԱԹՈՂԻԿԵ ԵՒ ԵԶՄԻԱԾՆԱԿԱՆ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ (1)

ԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. Լիկեղեցին
և նորա որդիքս Կաթողիկէ ըսելով իմա
ցածեմք և կ'իմանամք առ հասարակ
բոլոր քրիստոնեայ հաւատացեալները,
զոր Հռովմայեցիք և նոցա դաւա-
նակիցք կամ սխալմամբ կամ չգիտու-
թեամբ և կամ գողութեան բռնա-
ւորական ոգւով մը, Հռովմայ Լիկե-
ղեղեցին կ'ուզեն իմանալ և այնպէս
կ'ուզեն իմացնել այլոց ալ, ինչպէս որ
«հիմնական տարբերութիւն կաթոլ-

ղիկէ և էջմիածնական դաւանաւ թեց-
լսելով կ'իմանայ հռովմայեցւոց և
Հայոց դաւանաւ թիւնները :

Սակայն Հայաստանեայցա ուղղա-
փառ և Ղաթբերց անտի ցարդ ան-
փոփոխ Լիկեղեցին, մասնաւոր Լիկե-
ղեցի գիտէ Հռովմայեցւոց Լիկեղեցին,
մասնաւոր Լիկեղեցի և Յունաց Լիկե-
ղեցին, և մասնաւոր դարձեալ զանա-
զան ուղղափառ աղբաց Լիկեղեցիներ-
ը և Լուսսնոց ամէնք միասին առնելով
կ'իմանայ Կաթոլիկիկէ այսինքն Բնդ-
հանրական Լիկեղեցին :

Ղաթբերց ժամանակի և նոյն ինքն
Ղաթբերց իմացածն ալ այսպէս ըլ-

(1) Ինչպէս որ անցեալ ամսոյ Միտին միջոցաւ
ծանուցած էինք ահաւասիկ կ'սկսիմք գաթրձեան
Արժ. Յովնէփ վարդապետի Տարբերութեանց գրք-
քին պատասխանին ու լուծումը շարունակելու

լալը կը հաստատուի Պօղոս Առաքեալի
և կաթուղիկեայց թղթերու հասցէ-
ներովը :

Օրորքինակ Պօղոս Առաքեալ
առանձին Նկեղեցիներու մասնաւոր
թղթեր կը գրէ ըսելով առ Հռովմա-
յեցիս , առ Կորնթացիս , առ Լփե-
սացիս , առ Վաղատացիս , և այլն . և
ասոնց կարգին միտպէս մասնաւոր
Նկեղեցի կը սեպէ և Հռովմայեցւոյ
Նկեղեցին : Նմանապէս Պետրոսի ,
Յակովբայ և Յովհաննու և այլոց առ
կաթուղիկեայս ուղղած թղթերն ,
Հռովմայ Նկեղեցւոյն և նորոք պա-
պերունն ուղղուած չեն ըստ նոցա
կարծեաց , այլ ամէն քրիստոնեայ
ազգայ Նկեղեցիներու , որն որ ալ
կարգայ նոյն թղթերը , միանգա-
մայն ուղղուած են ամենուն ալ : Այս
կաթուղիկէ Նկեղեցին է , որ իրեն
տակ կը պարունակէ Հայն ու Հը-
ռովմայեցին , Յոյնն ու Եթովպի-
սիս , և Լիպտացին , և այլ
ամէն ազգեր որոնք կը հետեւին Քրի-
ստոսի Տեառն մերոյ Սուրբ Եւե-
տարանին :

Վանի որ առաքեալներն այսպէս
խմացած են և Քրիստոնեայ գտնը-
ւած ազգեր այսպէս կ'իմանան , այս
Հռովմայեցւոյ ըսած կաթուղիկէն
որն է , որ միայն Հռովմայ Նկեղեցին
կ'իմացնէ : Այս նոր բառին հեղինակն
ըլլալ կ'ուզէ Հռովմայեցին՝ սակայն
Հայն հին ըլլալով պինդ բռնած է
միշտ հինը , և չսիրէր երբեք նորը :

Այլ Հայաստանեայցս Նկեղեցի ,
մայր և դաստիարակ քո որդւոցս , կա-
թուղիկէ ըսելով դարձեալ հասկցուր
քո որդւոցդ առ հասարակ հաւատա-
ցեալները , և թող Հռովմայ Նկեղե-
ցին ալ հասկցնէ իւր որդւոց որ կա-
թուղիկէ ըսելով ինքը միայն կ'իմաց-
ւի . թող Հռովմայ Նկեղեցւոյ որդիքն

հաւատան թէ Կաթուղիկէ ըսելը Հռով-
մայ մէջ Ս . Պետրոսի տաճար ըսել է :

Սխաբդ ուղիղ է . սակայն արտա-
բերութիւնդ անուղիղ Հ . Յ . Վ .
վասն զի միտքդ զոր կը բացայայտես
Կաթուղիկէ և Էջմիածնական Դասան-
թիւն ըսելով ուղղապէս արտասանած պիտի
ըլլայիր երբ ըսելիք Հռովմայեցւոյ
Նկեղեցւոյ դաւանութիւն . և Հա-
յոց Նկեղեցւոյ դաւանութիւն . վա-
սրն զի Հայոց Նկեղեցւոյ դաւանու-
թիւնն էջմիածնէն ելած չէ , այլ Ա-
ռաքեալներէն սկսած . նմանապէս ալ
Հռովմայ Նկեղեցին Հռովմի պապե-
րէն յառաջ եկած չէ . ուստի հռովմե-
ական Նկեղեցի ըսելն ուղիղ չէ . և
ըսելու է Հռովմայ Նկեղեցի , Էջմի-
ածնական Նկեղեցի , Էջմիածնական
դաւանութիւն բառերը սխալ հետե-
ւանքներ կրնան ունենալ . Հայուն
իրեն համար չգործածած բառերն ու-
րիշ մը գործածել , ըսածն Հայուն
անհասկանալի ընել ըսել է :

Հայոց ազգը կ'սկսի Քրիստոսի
Նկեղեցանալ իւր թագաւորին Աբ-
գարու հաւատով մինչդեռ նոյն ինքն
տէրն մեր յաշխարհի աստ էր . և կը
հաստատուի նոյնին մէջ Թադէոս Ս .
Առաքելոյ Աղետիս գալովը , ուստի
մեր Նկեղեցին կ'ըլլայ Առաքեալներէն
սկսած և առաքելական . Հայոց Նկե-
ղեցւոյ գլուխ Կաթուղիկոսի աթոռն
Էջմիածին ըլլալով Հայոց Նկեղեցւոյ
հեղինակն էջմիածին ըլլալ չհետեւիր :

Իսկ Հռովմայ Նկեղեցւոյն գալով
արդի դրութեան նկատմամբ կրնամք
ըսել (պապական Նկեղեցի . պապա-
դաւան Նկեղեցի , ըստ որում . նոցա
համար Պապն անսխալ է , իրենց աս-
տուածն է . (այնպէս որ , հռովմեա-
կան ժողովուրդէն կարգ մը մարդիկ ,
երբ կը ըսեն թէ Հայոց Նկեղեցին
Յունաց Նկեղեցին և ուրիշ արեւե-

լեան քրիստոնեայ եկեղեցիներ չեն
ընդունիր Պապին անօրհնութիւնը ,
զարմանօք կը սրտամեն իրարու թէ ,
Հայերն Յոյները , և ուրիշ արեւել-
լեան իկեղեցւոց ժողովուրդներն հե-
րեախիսս են . վրան զի Պապին աստ-
ուածութիւնը չեն ընդունիր⁽¹⁾ : Սենը
չեմք զարմանար որ այս ուամիկ ժողո-
վորդն այսպէս կը խօսի , բայց այս
կը զարմանամք որ , այս ուամիկ ժողո-
վորդն իր առջեւ խեղացիներու ալ
այսպէս խօսուածքը լսած է և կը խօսի
Ենցիկնք հիմա դրբին յառաջարանին :
Իւր յառաջարանին մէջ կը ճգնի
հաստատել , որ Հին աստուածաբաշ-
տութեան մէջ ինչ որ էր Արուստղէ-
մըն հրէից համար , Քրիստոնէութե-
մէջ ալ հեթանոսաց նոր եկեղեցւոյն
(Քրիստոնէից) համար է Հռովմն
նմին նման : Եւ ինչպէս որ նոյն ժա-
մանակն Հրէից աստուածաբաշտու-
թեան ճանապարհէն աստուածաբաշ-
տութեամբ հանդերձ անդգալի կեր-
պով բաժնուած էր Սամարացւոց ազ-
գը , այսպէս ալ այսօր Հայոց ազգը
թէ եւ քրիստոնեայ ըստ Եւետարա-
նին որով և ամէն իկեղեցիներէ ա-
ւելի մերձ Հռովմայ իկեղեցւոյն ,
սակայն ամէն ազգէ աւելի հեռացած
է Հռովմայ իկեղեցիէն , Հռովմէն
դուրս փրկութիւն գաւանելով :

(1) Ոչ միայն այսպէս օտար դաւանութեանց
մէջ եղողներն համար , որ և իրենց Եպիսկոպոսաց
համար իսկ . ինչպէս վերջին ատեններս Հռովմայ
մէջ գումարուած ժողովին կողմ քանի մը արեւել-
լեան հռովմական Եպիսկոպոսներու և կարգ մը
ալ արեւմտեան ողջամիտ և զեռ ոչ կատարեալ
համարձակ պաշտօնական ճշմարտութեան Եպիսկո-
պոսաց Պապին անօրհնութիւնը մերժելին լսելով
անոնց վրայ իսկ գայթակղած՝ կ'ըսեն իրարու մէջ .
« Իշխանիկնիդ վար մը , բամառս պէյիւք ժո-
ղով ինն ձե՛մ օրան Եպիսկոպոսաբուն կարօրն ,
տան զիստեսի հերձաւածող օրմաւար : — Արեւն :
— Բազաւ կաղղըր տէյօրլար : Բարանըն տլա՛նլընը
գոտուէ և թմէյօրլար » :

Հիտակ է որ Սամարացւոց ազգը
Քրիստոսի տեառն մերոյ ատեն ան-
ըզգալի կերպիւ հեռացած էր հրէից
ճշմարիտ կրօնէն որ Հին օրինաց մէջ
Սոխէսի ձեռամբ Լստուծմէ տրու-
ած ամէն օրէնքները սահող ազգ-
մ'էր . և իրենց վարքը կը ցուցնէր թէ
զոհէն աւելի նախադաս կը սեպէին
օղորմութիւնը ինչպէս որ մարգարէ-
ից բերնով յայտնած էր Լստուած .
(զօղորմութիւն կամիմ և ոչ զզոհ) :
Նաեւս Ս . Վիքքն անփոփոխ պահե-
լու առաքինութեան ալ կեղտ մը չե-
րին : Եւ Լստուածաշնչի պատուի-
րանին նայելով թող սա իւր այսչափ
առաքինութեամբն հանդերձ անար-
դարանալի պարտաւոր դատուի Լս-
տուծոյ օրինացն առջեւ , որ չէր մը-
տադրէր երբէք որ Լստուած Արու-
ստղէմէն դուրս օրհնութիւն չընդու-
նիր , և թէ Արուստղէմի տաճարէն
դուրս պատարագ և քաւութի չըլլար :

Սակայն զարմանալի է որ Յիսուս
դարձեալ եկած Սամարացի կնոջ հետ
կը խօսի սրպէս զի ցրուի նոյն խօսքե-
րով այսօրուան հռովմայեցւոց ունե-
ցած կարծիքը իրենց վրայ թէ « ար-
տաքոյ հռովմոյ չիք փրկութիւն » . և
ինչ խօսք է որ կը խօսի Սամարուհ-
ւոյն . կարդա՛ և լսե՛ս :

« Եւ ցնա կինն տէր , թուի ինձ
թէ մարգարէ իցես դու : Հարբն մեր
ի լերինս յայսմիկ երկիրպագին . եւ
դուք ասէք , եթէ Արուստղէմ և եթէ
է անդի , ուր արժան իցէ երկիրպա-
գանել : Եւ ցնա Յիսուս կին դու
հաւատա՛ ինձ . զի եկեոցէ ժամանակ
յորժամ ոչ ի լերինս յայսմիկ և ոչ
Արուստղէմ երկիրպագանիցեն Հօր
Վուք երկիրպագանէք , որում ոչն գի-
տէք . մէք երկիրպագանէմք , որում
գիտեմք . զի փրկութիւն ի հրէից է :
Եւ եկեոցէ ժամանակ , և այժմ իսկ » :

է, յորժամ ճշմարտութիւն երկրպագութեան հօր հոգւով և ճշմարտութեամբ, քանզի և հայր զայն պիտի երկրպագուս իւր խնդրէ: Հոգի է աստուած և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութիւն սրարտ է երկրպագանել: Ասէ ցնա կինն գիտեմք զի մեսիս գայ, յորժամ եկեսցէ նա պատմեսցէ մեզ զամենայն: Ասէ ցնա Յիսուս, ես եմ որ խօսիս ընդ քեզ: Գրեալ է:

Որչափ որ Հրեայք այնպէս օրէնք առին թէ պէտք են Արուսաղէմի մէջ միայն Աստուծոյ օրհնութիւն կարգալ և երկրպագանել, տէրն ալ եկեր և կ'ըսէ Սամարուհայն թէ պիտի ժամանակ գայ որ ոչ սոց լեռք և ոչ Արուսաղէմ երկրպագութիւն պիտի չնեն Աստուծոյ, դուք չեք գիտեր որու կ'երկրպագէք, մեք գիտեմք որու կ'երկրպագեմք վասն զի, փրկութիւն ՚ի հրէից է. պիտի գայ ժամանակ և արդէն իսկ եկած է. որ ճշմարտ երկրպագուները պիտի երկրպագեն Աստուծոյ հոգւով և ճշմարտութեամբ, և ոչ Արուսաղէմով: Սինչդեռ այս խօսքն այն տեղ ըսուած է նոյն ինքն Քրիստոսի տեառն մերոյ բերնով, այսօր դարձեալ անիմաստ հռովմայեցիին հին Արուսաղէմի տեղ նոր Հռովմ կը հրամայէ հեթանոսաց, Աստուած եթէ երկրպագութեան համար առանձին տեղւոյ մը պէտք ունենար, արդէն որոշած էր հին Արուսաղէմը, և հարկ չկար զայն իւր տաճարովը մերժելու, որով և ստիպուէր այսօր հռովմայեցիին Աստուծոյ երկրպագութեան տեղի մը պատրաստելու աշխատութիւն: Աստուած իւր երկրպագութեն հոգի կ'ուղէ և ոչ Հռովմ, ճշմարտութիւն կ'ուղէ և ոչ Պսալ: «Յիւրան եկն և իւրքն զնա ոչ ընկալան, իսկ որք ընկալանն զնա ետ

նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ որոց հաւատացեան յանուն նոր: Ասոր մէջ չըսէր որ հռովմին պէտք է յուսալ, հին երուսաղէմին տեղ նոր հռովմ եղաւ զահարան, քրիստոնէին համար զոհ պէտք չէ, տէրը ողորմութիւն կը պահանջէ այսուհետեւ:

Ալ ուրկէ կը հետեւցնեն հռովմայեցիք թէ ինչ որ հրէից Համար Արուսաղէմն էր, նոյնն հեթանոսաց համար է Հռովմ, արդէն պէտք է գիտնան որ մենք Հռովմը Վաթուղիկէ եկեղեցի չենք ընդունիր, ինչպէս վերն ըսինք: Ալ ինչ վկայութի է որ Վիւրղի գրքէն կը բերէ թէ Հռովմն հեթանոսաց Արուսաղէմն է:

Կոչման խաբէութիւն հարկաւ պիտի յիշենք հոս. Վիւրղ կ'ըսէ Վաթուղիկէ այսինքն Րնդհանրական եկեղեցւոյն համար, և ինչո՞ւ մեր աստուածաբան վերապատուելին կ'ըսէ Վաթուղիկէ հռովմական եկեղեցի, կոչումն ընծայութենէն բերած այս վկայութիւնը զոր միայն կը յիշէ և ոչ թէ մէջ կը բերէ խաբէութեամբ առած է:

Իսկ (տրիդ. ժող. մասն. Ա. գլ. Թ. 19. այս ալ մենք չեմք ճանաչեր և չեմք գիտեր ինչ ըսած է. և եթէ պիտի ըսէ որ պէտք է ամեն քրիստոնէաց Հռովմի հովանաւորութեան տակ պաշտէ զ'Աստուած, զայն չեմք ընդունիր, և իրեն ալ ցոյց կուտամք Քրիստոսի տեառն մերոյ առ Սամարուհին ուղղած խօսքը թէ. «Ալ կեսցէ ժամանակ և այժմ իսկ է. յորժամ ճշմարտութիւն երկրպագութեան երկրպագանիցեն Հօր հոգւով և ճշմարտութիւն, քանզի և հայր զայն պիտի երկրպագուս իւր խնդրէ: Գրեալ է:

Տէրն մեր ինքը կը մկրտէ Յովհաննէսէն աւելի և առաքեալներն ալ ի

րեն հետ կը մկրտեն⁽¹⁾ հաւատարապէս
և ոչ մին կամ միւսը : Առաքելոց և
ոչ մէկ գործերէն կը հետեւի թէ Պետ-
րոսը մեծ է, Անդրէասը փոքր : Այ-
նչպէս պիտի հետեւցնեմք թէ ա-
ռանց Պետրոսի քրիստոնեայ ըլլալ ան-
կարելի է, և թէ արտաքոյ Հռովմայ
չիք փրկութիւն : Այլ երբեք միտք
ունենար Աստուած որ Հրէից Արու-
սաղէմին փոխանակ հեթանոսաց ալ
Հռովմը պիտի տար, կամ մարգա-
րէից և կամ իւր բերանով իսկ հա-
ւատացելոց կը յայտնէր :

Այնչափայտէս չարաչար աստի-
անգին ձգենք, Առաքելաբ մեր որ քա-
րողեցին այն տեղ անմիջապէս հիմն
ուեցաւ Քրիստոսի եկեղեցին, և Հռ-
ովմայ առաքելալը դեռ Հռովմ չը-
հասած, ուրիշ զանազան տեղեր ա-
ռաքելական Արքեպիսկոպոսի հիմնքն ըս-
կսուած էին և հաստատուած : Արու-
սաղէմէն սկսեալ ի հրէից, Անտիոքէն
սկսեալ ի հեթանոսաց : Այնչափէս
կ'ըլլայ այն ատեն Արքեպիսկոպոսի մայր
մը իւր ծնունդներէն ետքը դուրս
գայ, ընդունինք այսպէս :

Ամենեւին ոչ, Այլ Հռովմ և հը
ռովմէադաւաններն այսուհետեւ ալ
այս մեծ ոգին իրենց վրայէն գերելով
խոնարհութիւնը չկանչեն իրենց վը-
րայ, պիտի ըսեմք համարձակ թէ
անկերոց դասուն ամբարտաւանու-
թիւնը կը կրեն իրենց վրայ : Այսին զի
այսպիսի սրտի մը արտասանութիւն
ներն են զորս կ'արտասանէ Հռովմ
թէ «քրիստոսի փոխանորդն է, երկ-
նից արքայութեան փակող և բացողն

է, ում ուղէ, անոր կը բանայ և կը
փակէ, կաթողիկէ Արքեպիսկոպոսի
ընդմէջէն, ազգաց մեծն է, աշխարհի
տէրն է, և այլն, և այլն, «Օյա ա-
մենայնքեղ տաց, եթէ անկեալ երկիր-
որագանիցես ինձ, » Ասոնց ամենն ալ
սուտ է, և ամեն ազգ կրնայ վկայել
բացարձակապէս այս խօսքերու ստու-
թեանը «դուք ի հօրէ սատանայէ
էք . . . յորժամ խօսիցի սուտ՝ յիւ-
րոց անտի խօսի, զի սուտ է և հայր
նորա » : Յովն. Ը. 44 :

Հայաստանեայցս Առաքելական Ա.
Արքեպիսկոպոսի երբեք չսեց իւր Առաքե-
լոյն բերնէն թէ հին հրէութիւնը նոր
հրէութեան պիտի դառնայ, և Արու-
սաղէմի տեղն Հռովմ պիտի դուրս
երէ : Այլ մինչդեռ Հռովմ իւր լա-
պիտոյիսնի միակ տէրն եղող շանթա-
ծիք Արամազդէն հաշտեցնելու համար
նորա անդրիմերու առջև բաշնաց վը-
րայ կը ծիւրէր, Հայոց ազգն իւր Ա-
րքեպիսկոպոսի հիմնեց, իւր առաքելոյն ձե-
ռօք ընդունեց մկրտութիւնը և ոչ
Հռովմին հրամանովը : Առաքելոց հա-
մապատուութիւնն արդէն հաստա-
տուած է : Արքեպիսկոպոսի, համապա-
հոհութեան առաքելոց : ուստի մեզ հարկ
չմնար ասոր վրայ ալ վերստին կրկնել :
Այնչափ մեր Աստուածաբանին փառ-
տին թէ Հռովմայ Արքեպիսկոպոսի է կա-
թողիկէ Արքեպիսկոպոսի :

Հաւատարմ իրեն ըսածը :

«Նոր օրինաց մէջ հնոյն տնտեսու-
թիւնը չէ թէ հիմնովին ջնջուած,
հապա փոփոխութեամբ ազնուացած
և կատարելագործուած ըլլալով (Ապ. Ե. 17. 18. Եբր. Ա. 1. 2.) ինչ որ
ասան մը Արուսաղէմէն էր այն Ժողով-
րդեան նկատմամբ՝ որն որ հիմա իր
քաղաքովն ու տաճարովը մերժուած
է, նոյնը կաթողիկէ հռովմական
եկեղեցին է անոր տեղը կանչուած

(1) Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն
նորա յերկիրն Հրեաստանի, և անդ չըջնալ նորօր
հանդերձ մկրտէր : Յովն. Գ. 41. 22 :

Իրեւն գիտաց Յիսուս եթէ զուսմն Պարթևիցիքն
եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և մկրտէ
քան զՅովհաննէս, քանզի ոչ եթէ Յիսուս ինքն
մկրտէր՝ ալ աշակերտքն նորա : Յովն. Գ. 41. 1-2 :

հեթանոսաց համար : Ինչ որ հոն
նիւթական սահմանաւորութեամբ մաս-
նաւոր ժողովրդեան մը համար գիտ-
ուած էր, իբրեւ նախանկար օրինակ
հանդերձելոյ, հոս հոգի-որ սահմա-
նաւորութեամբ մարդկային ազգին
համար սահմանդրուած է իբրեւ ան
օրինակին ճշմարտութիւնը (Արշ. Միգ.
Տրիտ. Դ. Դ. մասն Ա. գլ. Թ. 19.) :
Ըսանկ կը հաւատայ ամեն կաթուղի-
կեայ : Ըսով կաթուղիկեայ Կեղեկե-
ցւոյ կառավարութեան ու վարդա-
պետութեան միութիւնն ապահով-
ցած է : 77

ԴԱՍՅԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐԱՊԱՏԻՒ ԺՈՂՈՎ

(Հարունակութիւն, տես թիւ 2),

Այս ամենի ամենախորին հիմքը
հոգեկան կեանքի սեռի սեպհական
օժիտի մէջն է, որ կայ անեւելոյթ աչ-
խարհին հաւատարմ, որի մէջ երեւելին
թաքնուած է : Հոգու այս կրօնական
ընթացքի ջերմութիւնն էլ բաւական
նութիւն է գտնուած միայն անձնակա-
նի մէջ : Այն թէ մի ինչ և իցէ ընդ
հանուր բան էր (կամ ուսումն, կամ
գաղափար), որ կանանց գէտ յաւել-
տարանը գրաւեց, այլ Վրիստոտի մէջ
անձնաւորւած Եստուծոյ սէրը, և այս-
պէս կը ներգործի բրիստոնէութիւնը,
որը իւրաքանչիւր առանձին հոգու
արժանաւորութիւնը այսպէս բարձ-
րացնում է, անձնաւորելով գործնալ
որոնց մէջ : Արանցում վկայ մի առան-
ձին հիմնուած տիրապետութիւն ըն-
դունակութեան, այլ աւելի յաճախ
մի խուռն թափանցութիւն ամբողջ
էութեան : Անձնական կեանքի այս

անմիջապիստե թեան հետ սերտ կապ-
ւած է խղճի մեծամեծ քնքշութիւնը
և սիրոյ անձնանու էր մասնակցութիւ-
նը, որը շատ անգամ մեզ հրաշագործ
բան է երեւում. որովհետեւ վերա-
ծին սէրը ամէն ինչ կարող է, նաեւ
ներգործել իրա սեպհական անձին վը-
րայ : Վանկցա անգամ ջղային կեանքի
(Verveleben) անհանգստութեանց յա-
ռաջացած յուզմունքների ստատիկ-
թիւնը. միաւորւել է կոմքի մի պարզ
զօրութեան ուժի հետ, ուր կարողա-
յել է միւսներին օժանդակ լինիլ
ծառայիչ սիրով : Այսպիսի սիրոյն զոհ
չ'կայ, ինչպէս տշխարհը անուանում
է. աաւով նա ստանում է. զրկուե-
լով շահում : Արդ այս չէ պատկա-
նում այն ամենամեծ և ամենագեղե-
ցիկ դասերին. որոնք կան և են զար-
գացման գործում այնպիսի սիրով
այսպիսի քրիստոնէական ուրախութիւ,
որը միւսներին բաղդաւորիչ և իրա-
նով երջանկացուցիչ է :

Այս ցոյց տուի այն նպատակը, ու-
րի վրայ ամէն գէպքում պիտի ուղ-
ղւի կանանց կրթութիւնը : Այս
ընդհանուր եղբայրակցութեան, թէ հիմ-
նաւոր կերպով իրարից պանաղան
մարմնական և հոգեկան ընդունա-
կութիւնները և տնային հանգա-
մանքներն իրանց անհամարելի տար-
բերութեամբ նշանակութիւն կը գրա-
նեն. և նմանապէս թէ ուր մի առան-
ձին, օրինակի համար, մի արհեստական
տաղանդ յառաջանայր կը գտնին ի-
րան սեպհական հոգացողութիւնը :
Իայց ապագայն ծածկուած է : Կա-
նանց կեանքի չըջանը, որի համար
նախապատրաստեւել է, ընտանիքն է,
և կեանքի ընդհանուր պաշտօնը ըն-
տանիքի մէջ և նրանից դուրս, միւս-
ներին օգնական լինիլ :

Երբորդ՝ իրագործողէ յետ-ը. ու է

զարգացնում և ինչպէս պիտի զարգա-
նայ : Կարծելով՝ բնութեան համե-
մատ պարտաւորութիւնը ծնողներէն
է մնում : Երանց օգնութիւն տալիս են
բացի շատ բանէ, ինչ զարգացման մէջ
օժանդակ է լինում առանց իրա վրայ
յոյս ունենալու և շատ անգամ ան-
կոչ, մանաւանդ եկեղեցին և վարժա-
րանը :

Եթէ մենք մի քիչ յետ նայինք
զարգացողութեան պատմութեան վը-
րայ, կը տեսնենք, որ դեռ անցեալ
դարումը և ներկայիս սկզբումը ազը-
կերանց զարգացման վարժարանը գը-
լաւոր գործ առաջ տանողներին կար-
գումը չէր հաշուում : Սիւն կրթու-
թեան առաջին տարեքներն էին ու
սանաւում հրապարակական վարժա-
րաններումը, իսկ բոլոր միւսները՝ տը-
ներումը, և աւելի դիպուածով :

Բարձրագոյն կարգերումը շատ
անգամ տնային զարգացման տեղը ձե-
մարանականը (Institutserziehung) բռնում
էր, սրի նպատակը գլխաւորաբար
կայանում էր հասարակական վար-
մանց մէջ՝ ֆրանսիացւոց նախակրթ-
թիւնների ազդեցութեամբ : այս պատ-
ճառով կաքաւելու վարժապետը և
շնորհաց ուսուցիչը (Maitre de danse e
professor de graces) մեծ դեր էին խա-
ղում : Եւսկից առաջ ուսանում էր
մի քիչ ֆրանսերէն, կաքաւիլ, երա-
ժշտութիւն (մուզիկ) և գիւցաբա-
նութիւն (միւթօրգի) : Եւս վերջի-
նը՝ ստանաւորներ և արհեստական
ձեւակերպութիւններ հասկանալու
համար. ինչպէս օրինակի համար, յոյու-
նի իշխանուհի, Եւսկեայ Վալիցինը,
երբ Բրիտաու քաղաքի մի կաթսի-
քական զարգացման տանից՝ յետ դա-
ռաւ այստեղ Բերլին իրա ծնողների

մօտ, և միանգամ թիրգարանում (1)
զրօնելիս՝ Եւսկոնին մի սուրբ Եւսկո-
մաքի, և Վ Ենուսին Սարիամ կուսին
տեղ ընդունեց և պատկառանք եր-
կրդադութիւն արաւ, իսկոյն նրան
այս տեղ մի ֆրանսիական օրիորդաց
վարժատուն տուեցին՝ այսպիսի սխա-
լանքները ուղղելու և դահլճի համե-
մատ (Saconmässig) կրթելու համար : Եւս
ժամանակը նշանաւոր վարժարանա-
կան կրթութիւնը արդէն վատահամ-
բաւ էր, ինչպէս դասակարգեալ նե-
րածութիւն գէպ ի սնապերճութիւ-
նը, որը պիտի փոխարինել էր : ինչ
որ անէր ընտանիքի գոգում մանկա-
կան և մայրական սերը և մի առողջ
բնական զգացմունք :

Սիւնի կարգերումը՝ զարգացու-
մը երկար ժամանակ մնաց բոլորովին
պարզ և զուրկ՝ կրթութեան ամէն
ունայն շքեղութեանց : այն տեղ էր
որոնելու հասկացող տան կին : Եւս
տանում էր Եւսուածաշնչից և տան
գործերից իրա ամենալաւ կրթու-
թիւնը, որով և ունէր այնու ամիւ-
մի պարզ հայեցում՝ իրան և աշ-
խարհը հասկանալու, այն կրթութի
շտուող, պարզ և զօրեղ զարգաց-
մամբ, ինչպէս լաւ օրինակներ են մեզ
ներկայացնում այս մասին օրինակի
համար, Վ անդորեկեան (1) համբաւա-
բերի թերեկան և իրա դուստր Եւ-
րօլինէ Պերթէսը : Եւսց արդէն Եւս
տուս Սէօգէրը (2) անցեալ տարի մի-
ջից յետոյ՝ գանգաւում է այս կար-
գի սահմանն էլ ֆրանսիացնող ազդե-
ցութիւնների վրայ և պահանջելով՝
յետ է նայում գէպ ի հին լաւ ժա-
մանակը : Ստորերում եմ նրա հայ-
բենասիրական երեւակայութիւննե-

(1) Սի պարտեզէ (Pare) Բերլինում և ժողո-
վելի իրբեւ զրօսարան է ծառայում : Թեեւ

րից «հիւսեղու սենեկի (Spinnstube) գեղեցիկ պատկերը և բարեհոգի կինը», որի համար ասում է նա. «Այդ անհրաժեշտ գովաբանի (Schmeicheln) և ոչ ոքի էլ պակաս գովաբանութիւն արիւ, նրա հայեացքը ամենի վրայ սիրում էր զուարճութիւն և բաւականութիւն»:

Բայց իսկոյն հետեւեալ պարբերութեան «ամենապիւրի հարսնացուն» մէջ հենգնում է նա այսպէս անուանուած գեղեցիկ զարգացումը. որը նա առողջ խոհականութեան խոսքով կոչւի (Frisur) է անուանում. և աւելցնում է թէ՛ ի հարկէ ծիծաղելի է յառաջագոյն խոսքայինների, քան թէ կրտսերին վրայ մտածելը: «Փարթամութիւնը պարկեշտ է, եթէ աւելորդութիւնը նրա հիմքումն է, բայց այն տեղ ուր փարթամութիւնը յուզում է հարկաւորութեան ծախքով, ուր հոգին կրում է դեռ պակասութիւն չգաւոր ճշմարտութիւններում և այնու ամենայնիւ կամենում է բարձրանալ անգործութիւնով բարձրագոյն իմաստութեան սեղանի վրայ, ուր մեր գուստրները ֆրանսերէն և անգղիերէն են թոթովում առանց ունենալու մի որ և իցէ ամենափոքր տեսութիւն կամ գործնականութիւն տուն պահելում, այն տեղ այս փարթամութիւնը հոգու համար ոչ այլ ինչ է, բայց եթէ մի փառաւոր թշուառութիւն: Այս փարթամութիւնը, ապականելով հոգին՝ հեռացնում հին

պատուաւոր առաքինութիւններից որոնցմով ինչպէս մի թաւշեայ (Samtene) գտակով մեր մայրերը շրջում էին. Սա յարուցանում է զզուանք դէպ ի ամենօրեայ անային պարտաւորութիւնները և այլն:

Ե. Ե. Սուսոյի էմիլը այն ժամանակը շատերին երեւեցաւ բացող դէպի խոհական զարգացումը վերադառնալու ծանապարհը: «Այն ինչ լաւ է, ինչպէս բնութեւնը ձեռքից գաւոր է գալիս, ամեն ինչ մարդու ձեռքերի տակ վատանում է, այսպէս է սկսում նա մի բնութեան աւետարան, մի հակասականութիւն իրա մէջ և անընդունակ ոչ մի հոգի լուսաւորելու և փրկելու: Վերամտնոյնումը ընդունեցաւ սաստիկ մեծ ցանկութիւն: Նախայիշեալ իշխանուհի Վալդեյինն էլ Սուսոյի գաղափարների ներքոյ էր: Ա. Ս. Նիմայերը ⁽¹⁾ պատմում է թէ նա երեւել է իրա որդու եւ գուստրի հետ Սալէ քաղաքի մանկապարտեզում (Dadagogium), ուսուցանելու ձեւը ճշգիւ տեղեկանալու համար: Այդու երեխանց (այն ժամանակ 11-12 տարեկան) հագուստները բոլորովին պարզ են եղել մաշկը կոկ սանարած, ոտները բոլորի, երեսները օղից եւ արեւից սեւացած: Մայրը ինքը՝ վարժապետների և աշակերտների անձանց խորհրդով է բերել պիւթագորեսան օրէնքից սեւ տախտակի վրայ, և նմանապէս իր երեխանց մաթեմատիքական խնդիրներ լուծել աւել: Այսպէս թէ դրանք լինեն և դիտարկել աղբիւրների ⁽²⁾ (1)

Թիւրքոյն անունն նշանակում է անասնոց այգի. սակայն անասուններ չկան մէջը, այլ բաւականին արձաններ:

(1) Վանդաբեկ մի քաղաք է, ուր Ժողովրդային բանաստեղծ Անտոնիոս քահանայն լոյս էր բնծալում լրագիր «Վանդաբեկեան համալսարանի» անունով:

(2) Սա էր շատ հայրենասէր գրագետ, իրաւագետ կամ քաղաքագետ, Նայնպէս և պատմաբան Ժամանակակից Շիլլերի և Գեթեի:

(1) Նշանաւոր էր իբրեւ Աստուածաբան, բայց աւելի նշանաւոր, իբրեւ մանկավարժ, ապրում էր Եւրոպայում գաւոր սկզբում:

(2) Այս աղբիւրները կամ ծաղկող Վենետիկան, րդներն են և մինչեւ այժմ էլ մի ձեւ կազմած ունին և զիտարարպէս թագաւորական աղաքային վրայ զբաղւած են, երեւելին իբրեւ հմուտ լոգոցողներ:

յողանալու շնորհքը տեսնելու համար։
Այն տեղ մօր նշան տալով՝ խմայել
են գուստրը և որդին թէ՛ իրանք էլ
աղիփներին հետ կարողեն անիլ։ Խսկոյն
իրանց վրայից տէն են գցել վերին
թեթեւ դգեստը, հեշտութեամբ
մալել մի ամբառնալի կամուրջի (Zug-
bruck) գերանի վրայ, իրանց այն բարձ-
րութեանց հեղեղի մէջ նետել, գե-
տումը դէպի վեր և դէպի վար լողա-
ցել, իբրեւ բալլերովին ընտել այս տար-
րին մէջ, և երբ ցամառն են գուրս
եկել, գովասանքներով ընդունել լը-
ղանալու շնորհքի վարժապետներէից։

Աի օրինակ. ինչպէս սովորաբար
վերացական կանսներին պատահու-
մէ։ Շուտով մարդ առանց նկատելու
առաջին փայլում նրանց անհաւատա-
րիմ կը լինի։ Բնութիւն, և նրա հետ
միասին ամենեւին չճանաչել, թէ ինչ
ղանաղանու թիւն է պահանջում աղ-
ջակաց բնութիւնը ազգայի բնութեց։
Բնութիւնը և կրթութիւնը, ինչպէս
մէկը՝ նոյնպէս միւսը պարունակում է
օգուտ և վտանգ զարգացման համար
բանը հիմի նրանց իսկական յարաբե-
րութիւնը ամէն մի առանձին դէպ-
քում գտնելում է։

Տնային մանկավարժութեան մէջ
մինչեւ այսօր մի բնութեան մէջ թե-
րահաւատութիւն հազուատես բան
չէ։ Թուլատրիչ արդեօք, հաւատա-
լով բնութեան, որը արդէն մերժե-
լու է, ինչ իրան համեմատ ընդու-
նելու, ինչ իրան ծառայիչ լինի։ Աի
յիմար յոյս է շատ դէպքերում մի
շատ անգամ գծուար պատժելի ան-
հոգացողութիւն, և թէ ամենա-
գահ հասակին ոչինչ չէ արգելում.
այսպէս օրինակի համար, և թէ տան
բոլոր գրեղէն պաշարը երախային ա-
ռաջ ազատ բաց է լինում։ Այդ զար-

մանալի է. և թէ տեղէ գտնում և
իրողութիւն արդէն 12-13 տարեկան
աղջկերանց մօտ, որ համարձակում
են. ճաշակել ամեն բան. կար-
դալ շեքրայիլ, վիպասանութիւններ
(Բոմաններ), ինչպէս որ իրանց
ձեռքն են ընկնում։

Այս հակառակը բնու թիւն չճա-
նաչել և ճնշելն է, ուր բնու թիւնը
կարօտում է միայն առաջնորդելու
կամ սահմանաւորելու։ Այս չէմ մը
տածում միայն այն տեսակ զօրեղու-
թիւն, ինչպէս, օրինակի համար,
բանասէր Ֆ. Լ. Վոլֆը գործ դը-
րած սլոտի լինի զարգացման մէջ, երբ
նա՝ իրա գուստրներէից մինը առա-
ւօտը դարձեալ իրա իրազները նրկա-
րագրելով պատմելուց յետոյ՝ երեւա-
կայութեան սեթեւեթութիւնի վտանգը
(Die Gefahr eines Übersoutherns) մերժելու
համար. ձեռքը սաստկապէս սեղանին
խտեց և բարկանալով նրան ասաց.
“Այսօրից սկսած՝ էլ չպիտի երազել ու
որպէս թէ նա իրա կեանքում էլ եր-
բէք երազ չէ տեսել. այլ առաւել
ես մոքումս ունիմ իւրաքանչիւր
քայլում այս վերահասութիւնը և հո-
գատարութիւնը, որը կտրծում է,
թէ պարտ է իւրաքանչիւր բնական
շարժում տեղնուտ զը ու զըլ, փողից
մինչեւ ու չ զարգացնում է. և վտար
միշտ միայն այն տեղէ կամինում լա-
ւայնել, ուր դուրս է գալիս, առանց
իւր նայեացքը աւելի ուղղելու նրա
սեպհական տեղի և ծագման վրայ.
Երեխայները ամէն տեղ պահպանե-
լու վախիկներով նեղութիւն կրելը և
նրանց իսկապէս այն շինեջ. ինչ որ
մարդ ինքն է գտնել։ Այսրական հո-
գացողութեան սխալանաց որ պատ-
կերները այս տեղից նկարելի չեն։
Աի մօր, որը իրա շարունակ մտայու-
ղութեան պատճառով միշտ իրա երե-

խոնց հետ զըաղւած և տանջւած էր և այնու ամիւ զարգացման կողմանէ բոլորովին յաջողութիւն չունէր, ասաց մի ուրիշը. նրա տրտնջալուն վրայ. և ես ձեզ կ'առեմ ինչէ պակաս ձեր երեսանց. անգլո-վի-ն (Vernaclosaigung):

Ի՛նչ որ նա այսպէս անուանեց, 'ի հարկէ մի քիչ այլապէս է. Նա, որը այսպէս ասաց, իրա սեպհական երեւ խայներին վրայ պահել էր մի բաց աչք այն մասին, ինչ որ նրանք բնութեանց սեպհականութիւն էին ստացել, բայց ինչպէս նրանք ներքուստ զանազան էին, այդ մասին մի ուրախ հաւատ դէպ ի՛նչու ծոյ ողորմած կառավարութիւն և պահպանողութիւնը. ապա հոգացողութիւն, թէ երեսխայները մեծանան պարզ և ոչ մի տեղ ազահութիւն չ'զրգուող բաների փրկարար սովորութեամբ. և էլ ուրիշ ոչինչ չիմանան, բայց միայն թէ երեսխայները պարտաւոր են լինիլ խօսքի հնազանդ, ամէն բանում և խօսքում ճշմարիտ և բայ և վերջապէս մեծ հոգացողութեամբ մտաւոր: Այս երեւքիցն էր կայանում նրա կանոնների գումարը: Սիւս բոլոր բաներումը՝ երեսխայներին զարգացրել էր միատեղ կենակցութիւնը՝ տան մաքուր, առողջ դրական և ոչ բացասական հոգւով լցուած եթերի մէջ: Սօր հետ սովորել էին նրանք աղօթել և մայրը չէր դադարում նրանց աղօթող սրտի վրայ գրկելուց:

Կանանց զարգացման վարժարանները երբեք չեն կարող ծնողաց տան և մօր տեղը բոլորովին բռնել: Բայց թէ այս վարժարանները կարող են մերձենալ և հաղորդել մի դաստիարակութիւն և մի կրթութիւն, որը հարկաւոր էլ է փորձառական կեանքի մէջ, ապացուցանում են գերմանիացումը շատ գերազանց առաջնոր

դուած և կարգադրուած և մանկավարժական գործերի բոլոր յարաբերութիւններից լիովին ազատն տնէրի և կառուցուածների հետեւանքները:

Վարժարանը պիտի ոչ այլ ինչ լինի, բայց եթէ տան օգնական և այսպէս էլ էր հենց, երբ աղջկերանց զարգացումը գլխաւորապէս տնային էր և գործնականապէս կենսքումը: Այս յարաբերութիւնը յեղտիտութիւն է. աղջկերանց զարգացումը գլխաւորապէս վարժարանական է դառիլ և դէպ ի վարժարանի գիտութիւնը ուղղուիլ: Շլայերմաները (1) աղջկերանց վարժարանը անուանեց մի անհրաժեշտ կարեւորութիւն ընտանեկան զարգացման համար, որին մերձենալու պիտի վարժարանը միշտ աշխատի: Բայց թէ նրա այս բմբռնողութիւնը ուղիղն է, ամէնքը յօժարակամ կը խօստովանին, որոնք տեսականապէս կամ գործնականապէս այս մանկավարժական դաշտում աշխատակից են: Այն որ չէ վիճում թէ աղջկերանց վարժարանի ամենակարեւոր դասը իսկական զարգացումն է. Այս ինչպէս անհերքելի ճշմարտութիւն (Adiom) է գիտում: Աղջկերանց վարժարանը պիտի լինի ընդարձակացած ընտանիք: Այժմ հարցնելու է, թէ ինչպէս կարող է լինիլ: Այս իսկոյն որուն հետ կցելու է, թէ այն դասին միայն մի մերձաւոր եղանակով էլ համապատասխանել կարող չեն այս տեսակ վարժարաններից շատերը արդէն իրանց ընդարձակութեան պատճառով:

(1) Ամենաերեւելի աղտոտամիտ առտուածարաններից մէկն էր, փրօֆիտոր և քահանայ Բերկնու, ամենահմուտ և հիմնաւոր բացատրիչ Պլատոնի և Շպինոզայի:

ԽՐԱՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԻՍՄԱՆ ԵՒ
ԱՇԱԿԵՐՏԵԼՈՑ ՆՈՐԻՆ Ի ՁԵՒ
ԲԱՐԱՌՆԱԿԱՆ :

Ո՛վ հանդիսացեալք մերում գըղ-
րատան ,

Հրաւիրեմ սիրով զձեզ միաբան ,
Յայս սեղան մտաց ձերոց սննդեան ,
Որով միշտ աճիլ և գոլ բանական :
Ի բաց վտարեալ՝ զառիթ ձանձ-
րութեան ,

Յորում է սրտակեր այսոյն չարութիւն ,
Եւ Զանիւ փութոյ՝ սրտի եռացման ,
Կուռ կալ շտապիլ՝ գողտրիկ գիտութիւն :

Սոյն զարմանահրաշ՝ ուսումն կըր-
թութեան ,

Յանգ անձայն գոչմամբ յիւր գող հան-
գըստեան ,

Յոր գրկախառնեալ սիրելեաց նման ,
Օ՛ր էր փափաքեալ մինչև յաւիտեն :

Եւմ զերթ նաւուղիդ՝ զձեռս ՚ի
ծնօտին ,

Ողբ մեծ յօրինել՝ յարտասուաց կաթին ,
Քանզի խաթարել՝ գիտութեան նաւին ,
Որ յիշատակի՝ ըստ արթնականին :

Եւ և հոլունի ՚ի սուգս համա-
կեալ ,

Ի ձիգս հարուստս ժամանակս տեալ ,
Որնչեւ գտանիցէ զիւրն սիրելցեալ ,
Օ՛ր բազում ամաց էր այրիացեալ :

Երգ պսակեմք՝ հաշտեալ ընդ
նմին ,

Ի յանըց՝ կապանս՝ փափաքմամբ սրը-
տին ,

Ի ձերոց մտաց ծնունդք արտադրին ,
Յըսպիտակաբայլ վայրս բնակին :

Եւ իմաստութեան շնորհ վեր-
նային ,

Օ՛րագեացէ առ ձեզ՝ ըղջյալն բանին ,
Յայնժամ հեղգութիւնք ՚ի բաց տա-
րագրին ,

Եւ տգիտութեան խաւար՝ լուծանին ,
Թէ կաճառք հմտաց զիմաստօրդ
տեսցեն ,

Ի մտաց նժարն հաստեալ կշռորդին ,
Օ՛գովեստի հիւսս զօղեալ յերեւրեն ,
Եւ զերանութեան տեր՝ սեթեւեթեն :

Աւսումն զգօնութեան գոչէ մե-
ծապէս ,

Եւմ վաճառական՝ բանին լիապէս ,
Թէ որք կամիցին՝ առցեն ձրիապէս ,
Ի իցին մեծացեալք՝ շնորհքն պէսպէս :

Իսնդիր ինչ ժառմ՝ ՚ի ձէնջ մարդե-
լոց ,

Ի ծովք զիս հերքել՝ յար մտաց ձերոց ,
Օ՛ր բեղմնաւորեալ՝ ուրձացեալ սլա-
ղոց ,

Ի իցի որսձող առ ձեզ գիմելոց :
Յատկապէս ունիմ. ակն ինչ պառ-
ուական ,

Յաշտարհիս այլ իմն՝ չեք նմին նրման ,
Եւ քան զպայծառ՝ լոյս արեգական ,
Ու հողին այնորիկ՝ ՚ի մեծութեան կան :

Եւն ազնուագոյն՝ է հայոց լեզու ,
Նըմին ստացողք՝ լինին մեծարու ,
Օ՛րոց ըզձաշակն՝ թէ որ առնուցու ,
Օ՛յլ օտար բարբառն ՚ի բաց ընկենու :

Չէ ՚ի պաղպանջունս՝ գըրոց որ
նըստիմ ,

Յաջմէ յահեկէ՝ միշտ փառաւորիմ ,
Հայասեռ գրահից՝ լեզուս բընակիմ ,
Եւ ապա թէ ոչ անդէն տոչորիմ :

Օ՛րնէն գերահրաշ՝ զգօնութիւ-
նըն այն ,

Խրատելով վարժէ զձեզ մանկունս
համայն ,

Վայ այնմիկ ասէ՝ որ ՚ի տղայութեան ,
Ետէ զձայրացեալ, ուսմունս գիտութիւն ,
Օ՛յս պարտ ցանկալի՝ համարիմ
պատկան ,

Օ՛րս ՚ի ձեր լեզու կրել անխափան ,
Օ՛ր ոգիչ իմ է՝ ծնունդ Ներսիսեան ,
Որ Երկստակէս՝ ՚ի կարգի անուան



Ա Ր Կ Ա Տ Ք

Ա Ր Ի Ս Թ Ո Ն Օ Ի Ի Ս Ի Ն

(Հարուճակութիւն, տես թիւ (2):)

Դատաւորները զայն վաւերացուցին, և ահա այն ատեն ես ալ ցոյց տուի նաւ ուս մէջ հետս բերած բոլոր հարստութիւնքս, և յայտնեցի աւանց թէ ես այն Լրիսթանօսիւն էի որ Սամոսի բռնաւորին՝ Փոլիկրատի քով այնքան գանձուց տէր եղած էի։

Եղբայրներս՝ այնպիսի անիրաւութեամբ ինձ հետ վարուելուն վրայ զղացան, և օր մը իմ ժառանգներս ըլլալ կարողանալու փափագանօք, ամեն ճիւղ ի գործ դրին ինձ հետ բաւականաւոր համար, բայց անօգուտ։ Իրենց բաժանումը՝ պատճառ եղաւ որ մեր Հօրունեցած բոլոր ստացուածքը վաճառեն, ես զանոնք գնեցի, և այսպէս իրենց հօր բոլոր ինչքը այն անձին ձեռքը անցընելը տեսնելու ցաւը ունեցան, որուն չը կամեցան աւանցմէ ամենաշնչին մասը տալ, այսպէս սոսկալի աղքատութեան մէջ ինկան։

Բայց իրենց սխալմունքը բուականապէս զգալէն յետոյ, ուղեցի իմ բարի բնաւորութիւն անանց ցոյց տալ անոնց ներելով ընդունեն զիրենք տանս մէջ, և իւրաքանչիւրին՝ ծովուն վրայ վաճառականութիւն ընելու համար, դրամ պարգեւեցի, որպէս զի անոնցմով շահին և ապրին, և զիրենք աւանքն ալ նորէն միացուցի, իրենք և իրենց սղաքներն իմ տունս խաղաղութեամբ բնակեցան, և ես այս զանազան կամ տարբեր ընտանեաց բոլրեցուն հասարակաց Հայր դարձայ։

Նոքա՝ իրենց փութեամբ և աշխատութեամբն ու փութաշնոթութիւն կոյն երեւելի հարստութեանց տէր եղան։

Ասկայն ծերութիւնն՝ ինչպէս որ կը տեսնես, վրայ հասաւ, նա իմ մաշերս ճերմկցնելով և երեսս կնճռելով, իմացուց որ երկար ժամանակ չը պիտի կրնամ վայելել այսպիսի կատարեալ երջանկութիւն մը։

Սեռնելէս յառաջ կամեցայ մի վերջին անգամ եւս այն երկիրը տեսնել որ այնքան սիրելի է ինձ, և որ նոյն իսկ հայրենիքէս աւելի սիրտս շարժած է։

Իսկին որուն մէջ սորվեցայ ես բարի և իմաստուն ըլլալ առաքինի Լրիսի հսկողութեան տակ։

Նոյն գնացի այն տեղ ծովու վրայէն և հոն Սիկատ կղզեաց մէկ կղզիէն վաճառական մը գտնելով, իմացայ որ Տելսո կղզւոյն մէջ Օրսիօզի մէկ որդին կայ որ իր մեծ Հօրը առաքինի Լրիսի իմաստութեան և առաքինութեան կը հետեւի։

Նմիջապէս ի սիւն ճանապարհը թող տալով փութաւ ցայ գալ Ապոլոնի հովանաւորութենէրքեւ, նորա կղզւոյն մէջ փնտռելու այն պատուական մնացորդը ընտանիքի մը, որուն ամենայն ինչ կը պարտիմ, ինձ ապրելու այլ եւս բիչ մը ժամանակ կայ, Պարկայք՝ որ թշնամի են այն քաղցր հանգստութեան, զոր դիք դուն ուրեք մահկանայուաց կը պարգեւեն, պիտի փութան կենաց օրերը կարճել, բայց ես մեռնելու գոհ պիտի ըլլամ, միայն թէ աչքերս տեսնային Տիրոջ թոռն իրենց լոյսը կորսնցունելէն յառաջ, Հիմա խօսեցէք, ովէք դուք որ նորա հետ այս կղզւոյն մէջ կը բնակիք, կը ճանաչէք զայն, և կարող էք ինձ ըսել թէ ո՞ր կրնամ գտնել զինքը։

Եթէ զանիկա ինձ ցոյց տայք, թող Աստուածները վարձահատոյց լիցին ձեզ, ձեր ծննդաց վրայ ձեր զաւակաց զաւակները տեսնել տալով ձեզ մինչեւ հինգերորդ սերունդ, և թող պահպա-

նեն ձեր տունը խաղաղութեան և առատութեան մէջ, ձեր առաքինութեան փոխարէն :

